Արձանագրություն N 3

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից թվային ֆոտոխցիկի (լրակազմ) ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/13 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

20 ապրիլի 2022թ.
ժամը՝ 10.45

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Տ.Պարսիկյան, Ա.Լալայան, Դ.Օհանջանյան, Ա.Մանուկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Սաղաթելյան

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 31.03.2022թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որով բողոքաբերը խնդրել է պարտավորեցնել ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-22/13 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (այսուհետ՝ Գնահատող հանձնաժողով)՝ դադարեցնել 24.03.2022թ.-ի թիվ 2 արձանագրությամբ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ որոշումը և որպես հետևանք՝ դադարեցնել նույն արձանագրությամբ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշումը:

2. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշման վերաբերյալ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի՝ 15.04.2022 թ.-ի թիվ ԳԲՔԱ-Լ0-2022/38 որոշմամբ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի բողոքը բավարարվել է:

3. Տեղեկություն նիստը կասեցնելու մասին

Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-Լ0-2022/38 որոշումը, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնումների էլեկտրոնային http://eauction.armeps.am համակարգում Ընթացակարգի կարգավիճակը նշված է որպես «ավարտված», ինչով պայմանավորված հնարավոր չէ իրականացնել Ընթացակարգի հայտի գնահատման, պայմանագրի ծանուցման և կնքման գործառույթները, Գնահատող հանձնաժողովը որոշեց 20.04.2022թ. նիստը կասեցնել, Ընթացակարգի գործընթացը շարունակելու նպատակով դիմել Լիազոր մարմնին՝ http://eauction.armeps.am համակարգում գործընթացը շարունակելու գործառույթը կարգավորելու նպատակով:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հաջորդ նիստը հրավիրել Լիազոր մարմնից պատասխան գրության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 10:45-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

4 . Տեղեկություն՝ Լիազոր մարմնին դիմելու և խնդրին լուծում տալու վերաբերյալ

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը՝ 20.04.2022թ. թիվ 1.4/1831-2022 գրությամբ դիմել է Լիազոր մարմնին, որին ի պատասխան Լիազոր մարմնից ստացվել է 2372-2022 գրությունը /Համակարգողին մակագրվել է 25.04.2022թ.-ին/, որում նշված է, որ Համակարգում կատարվել են անհրաժեշտ փոփոխությունները, ինչի արդյունքում հնարավոր է իրականացնել հայտերի գնահատումը:

5 . Տեղեկություն նիստը վերսկսելու և հայտի գնահատման վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 26.04.2022թ.-ին ժամը 10.45-ին: Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/38 որոշումը՝ Գնահատող հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

6 . Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

26.04.2022թ.-ին Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

6.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին հայտարարել որպես ընտրված մասնակից, իսկ Ընթացակարգի մյուս մասնակից «Ջի Էմ Պրո» ՍՊԸ-ի հայտը մերժել:

6.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

6.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

6.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝	_____	Վարդան Թորոսյան
անդամներ՝	_____	Տիգրան Պարսիկյան
	_____	Անժելա Լալայան
	_____	Դավիթ Օհանջանյան
	_____	Արմենակ Մանուկյան
Քարտուղար՝	_____	Հերմինե Սաղաթելյան